ԿԱՐԾԻՔ

Շողակաթ Վարդանի Դևրիկյանի «Գրիգոր Լուսավորչի պատկերը հայկական և եվրոպական կերպարվեստում (9-20-րդ դարերի համատեքստում)» ատենախոսության մասին՝ ներկայացված ԺԷ.00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում գործող 016 մասնագիտական խորհրդին, թեկնածուական աստիճանի պաշտպանության համար

Ատենախոսության վերնագրում արդեն արտացոլվում են հետազոտության թեմայի գիտական հարցադրումների շրջանակը և բուն աշխատանքի բովանդակությունը: Աշխատանքը նվիրված է 9-20-րդ դդ. հայկական և եվրոպական արվեստում ստեղծված Սբ Գրիգոր Լուսավորչի պատկերների համակողմանի ուսումնասիրությանը՝ քննության առնելով պատկերագրական զանազան տիպերի առաջացման պատմական աղբյուրները, տարբեր մշակույթներում և դարաշրջաններում կերպարի մեկնաբանման և ոճական առանձնահատկությունները, փոխազդեցությունները:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, համապատասխան տրոհումներ պարունակող երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ընդարձակ ցանկից և հավելվածում ամփոփված 252 վերատպությունների ալբոմից: Ներածության մեջ հանգամանալից հիմնավորվում է ուսումնասիրության արդիականությունը, բնորոշվում առարկան ու թեմայի մշակվածության աստիճանը, ներկայացվում հիմնահարցի հետազոտության նպատակն ու խնդիրները:

Առաջին գլխում հետազոտվում է քրիստոնեական արվեստում Սբ Գրիգոր Լուսավորչի պատկերագրության ձևավորման և զարգացման վաղ շրջանը (9-17-րդ դդ.)՝ ուսումնասիրելով Ուղղափառ եկեղեցու միջավայրում ստեղծված խաչանկարների և որմնանկարների առաջին օրինակները, բյուզանդական և հայկական մանրանկարները: Ցանկալի կլիներ, այս գլխում անդրադարձ կատարվեր

նաև հայ միջնադարյան արվեստում Սբ Գրիգոր Լուսավորչի կերպարի հայտնի օրինակներին՝ Օձունի մեմորեալ կոթողի (5-6-րդ դ.) և Աղթամարի Սբ Խաչ եկեղեցու արևելյան ճակատի (10-րդ դ.) պատկերաքանդակներին (Զ. Հակոբյան, Օձունի կոթողի մեկնաբանման հարցի շուրջ, Էջմիածին, ամսագիր Մայր Աթոռ Սբ Էջմածնի, Էջմիածին, 2005, թիվ Ա, էջ 74-80, Ս. Տեր Ներսիսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 88, նկ. 31-32)։ Երկրորդ ընդարձակ գլուխը (էջ 36-116) նվիրված է 16-20-րդ դդ. Եվրոպայում ստեղծված Լուսավորչի պատկերների ուսումնասիրությանը՝ մանրամասն վերլուծության են ենթարկվել Նեապոլի Գրիգոր Հայի վանական համալիրի որմնանկարները, փորագրանկարները, սրբապատկերները, այդ թվում և Ռումինիայի հայկական եկեղեցիների պատկերները։ Ռումինահայ և արևելաքրիստոնեական արվեստի գործերի համեմատության միջոցով բացահայտվում է հայկական պատկերգրական ավանդույթի փոխազդեցությունը տարածաշրջանի արվեստի հետ։ Երրորդ գլուխը նվիրված է 18-20-րդ դդ. հայ արվեստում Սբ Գրիգոր Լուսավորչի պատկերների ուսումնասիրությանը՝ առանձին վերլուծելով Սբ Էջմիածնի տպարանի հրատարակած գրքերի պատկերները, «Աստվածամայրը Մանկան հետ» սրբապատկերներում որպես բարեխոս սրբի կերպար և հայկական ու եվրոպական արվեստում ստեղծված «Սբ Գրիգոր Լուսավորչի և Հռոմի Սեղբեստրոս Ա պապի հանդիպումը» պատկերները։

Գիտական պատշաճ մակարդակով կատարված արվեստաբանական, ձեռագրագիտական, աղբյուրագիտական, պատմահամեմատական համալիր քննության և պատկերագրական վերլուծությունների արդյունքում ներկայացվում և հիմնավորվում են տարբեր մշակույթերում և արվեստի տեսակներում ստեղծված Սբ Գրիգոր Լուսավորչի պատկերագրության վերաբերյալ սեփական դիտարկումները։

Ատենախոսությունը կարևորվում է նրանով, որ հետազոտության արդյունքում կատարվել է կարևոր հավաքչական աշխատանք, ինչի շնորհիվ հավաքագրվել է Լուսավորչի պատկերների շուրջ 400 նմուշ (աշխատանքում ընդգրկվել են 215-ը), այդ թվում իր կողմից բացահայտված նոր օրինակներ, ճշտվել և լրացվել են հեղինակների մասին տվյալներ։ Առաջին անգամ հանգամանորեն ուսումնասիրվում է Սբ Գրիգոր Լուսավորչի պատկերագրության ձևավորման պատմական,

դավանաբանական և գեղարվեստական հիմքերը: Հայոց առաջին հայրապետի զանազան պատկերատիպերի վերլուծությունը կատարվում է հայկական, բյուզանդական, հետբյուզանդական, Կաթոլիկ և Ուղղափառ եկեղեցիների միջավայրում ստեղծված արվեստի գործերի (խճանկար, որմնանկար, մանրանկար, սրբապատկեր, փորագրանկար) համակողմանի քննության հիման վրա, ներկայացվում են առանձին պատկերագրական տիպերի առաջացման, զարգացման և կրած փոխոխությունների ընթացքը և գործառույթը: Արժեքավոր է այն, որ հայկական և եվրոպական արվեստների օրինակների համեմատական վերլուծության միջոցով դիտարկվում են նաև մշակութային փոխազդեցություններին, պատկերագրական առանձնահատկություններին վերաբերող հարցեր:

Ուսումնասիրության նյութի մշակվածության աստիճանը, ընդգրկման շրջանակը, աշխատանքի շարադրանքի տրամաբանական կառուցվածքը, յուրաքանչյուր գլխի վերջում տրված եզրահանգումները հավաստում են, որ կատարվել է երկարատև ու մանրակրկիտ աշխատանք և նաև այն, որ թեման շատ հոգեհարազատ է Շողակաթ Դևրիկյանին:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, միանգամայն համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը: Հեղինակի հրատարակած գիտական հոդվածները, Հայաստանում և արտերկրում կազմակերպված գիտաժողովներում ներկայացված զեկուցումները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Վերոհիշյալի հետ մեկտեղ պետք է նշել, որ աշխատանքի վերաբերյալ կան որոշակի նկատառումներ և դիտողություններ, որոնք հանգում են հետևյալին.

Ա. Աշխատանքը կշահեր, եթե 18-20-րդ դդ. հայ արվեստում Լուսավորչի պատկերների ուսումնասիրությանը նվիրված երրորդ գլխում, խոսվեր նաև 17-18-րդ դդ. հայկական սրբանկարչության մեջ հայտնի այն նմուշների մասին, որոնցից են՝ անհայտ հայ նկարիչների «Սբ Գրիգոր Լուսավորիչ», «Էջմիածնի հիմնադրումը», «Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատին» Հովնաթան Հովնաթանյանի «Հովիվները նկատում են Սբ Գրիգոր Լուսավորչին ծառի փչակում» և «Սբ Գրիգոր Լուսավորչի

թաղումը» մեծակտավ գործերը (տես՝Ե. Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք, Ա, Երևան, 1971,էջ 114-115, Ք. Ավետիսյան, Հայ եկեղեցու սրբերի պատկերները 17-18-րդ դդ. գեղանկարչության մեջ, Հայոց սրբերը և սրբավայրերը. Ակունքները, տիպերը, պաշտամունքը, Երևան, 2001, էջ 327-334, Ք. Ավետիսյան, Հայոց դարձի գլխավոր դեմքերը հայ միջնադարյան արվեստում, Աստվածաշնչական Հայաստան. Միջազգային գիտաժողով, Ժողովածու, Երևան, 2005, էջ 748-755)։

Բ. Շատ հպանցիկ (մեկուկես էջ) անդրադարձ է կատարվում Անիի Տիգրան Հոնենցի Սբ Գրիգոր եկեղեցու (1215 թ.) որմնանկարներին, որոնք Լուսավորչի վարքի առայժմ հայտնի ամենավաղ և ամբողջական պատկերաշարն է։

Գ. 18-րդ դ. հրատարակված գրքերում տպագրված «Գրիգոր Լուսավորչի տեսիլը» (ավելի հայտնի է «Էջմիածնի հիմնադրումը» անվանումը), «Գրիգոր Լուսավորիչը մկրտում է Տրդատին» փորագրանկարների պատկերագրության վերլուծության ժամանակ կարելի էր ներկայացնել այդ տեսարանների 17-րդ դ. նախօրինակ սրբապատկերները, որոնք գտնվում են Մայր Աթոռ Սբ Էջմիածնում։

Դ. Հետազոտական աշխատանքի արդունքում գիտական շրջանառության մեջ է դրվում թեմային վերաբերող ստվարածավալ գրականություն, որտեղ բավականին շատ են օտարալեզու հրատարակված նյութերը, ինչը գովելի է։ Որոնումը դյուրին դարձնելու համար, խորհուրդ կատանք ընդհանուր ցանկում առանձնացնել սկզբնաղյուրները մնացած գրքերից և, ինչպես ընդունված է, տեղադրել սկզբում։

Մեր կողմից արված դիտողությունները և առաջարկությունները ունեն գործնական նշանակություն և ամենևին չեն նվազեցնում պաշտպանության ներկայացված թեկնածուական ատենախոսության գիտական արժեքը։ Այն ավարտուն, ինքնուրույն աշխատանք է՝ նվիրված 9-20-րդ դարերի հայ և եվրոպական արվեստներում Սբ Գրիգոր Լուսավորչի պատկերների համալիր հետազոտությանը։ Այն կարող է օգտակար լինել հայ և համաքրիստոնեական արվեստի պատմության, պատկերագրության և մշակութային փոխառնչությունների հարցերը ուսումնասիրողների համար։

Գտնում ենք, որ Շողակաթ Դևրիկյանի ատենախոսությունը միանգամայն բավարարում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի թեկնածուական աստիճանի համար ներկայացվող պահանջները, ուստի միջնորդում ենք ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտին կից ԺԷ. 00. 03. գիտական աստիճաններ շնորհող խորհրդի առջև՝ Շողակաթ Վարդանի Դևրիկյանին ներկայացնելու արվեստաբանության թեկնածուի գիտական աստիճանի շնորհման «Գրիգոր Լուսավորչի պատկերը հայկական և եվրոպական կերպարվեստում (9-20-րդ դարերի համատեքստում)» ատենախոսության համար:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Քնարիկ Ավետիսյան
արվեստագիտության թեկնածու,
ՀԳՊԱ Արվեստագիտության և հումանիտար
գիտությունների ամբիոնի դոցենտ

10.07.2026

Հաստատում եմ արվեստագիտության թեկնածու, դոցենտ Քնարիկ Ավետիսյանի ստորագրությունը

ՀԳՊԱ գիտքարտուղար՝ Աննա Գալստյան

10.07.2026